**Սեպտեմբերի 18-ին վստահենք Վաչագան Ադունցին, ով անցած երկու տարում ապացուցեց, որ կարող է Գորիս համայնքի արժանավոր ղեկավարը լինել:**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

²ßË ³ñÑùë ÙÇßï ïÙÝ ³« ³ë ³ Ù ³ ñ ¹Á ë»õ»ñ»ë ãÙÝ ³ ...

²Â ² ²ä ºð
(Àêî ²Îêº È ´ ²ÎàôÜòô)

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 28 (404)

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



# ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ.
## «Գորիս համայնքին՝ նվիրումս, փորձս, գիտելիքներս»

**«Սյունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է Գորիս համայնքի ղեկավարի թեկնածու Վաչագան Ադունցը**

**ՄԵՐ ԹԵԿՆԱԾՈՒՆ**

*Վաչագան Ադունց. ծնվել է 1967թ. հունվարի 1-ին Գորիս քաղաքում:*
*1973թ. ընդունվել եւ 1983թ. գերազանցությամբ ավարտել է Գորիսի N4 միջն. դպրոցը:*
*1983թ. ընդունվել եւ 1988թ. գերազանցությամբ ավարտել է հայկական գյուղատնտեսական ինստիտուտի «Ավտոմոբիլներ եւ ավտոմոբիլային տնտեսություն» բաժինը: Դպրոցում եւ բուհում ուսանելու տարիներին զբաղվել է հասարակական գործունեությամբ:*
*1988-1989թթ. աշխատել է Գորիսի շրջանային ագրոարդյունաբերական միավորումում՝ ավագ ինժեներ-տնտեսագետ, 1989-1993թթ. աշխատել է Գորիսի ԲՈՒԱՏՁ-ում՝ նորոգման արհեստանոցի վարիչ, պլանատնտեսագիտական բաժնի վարիչ, 1993-1994թթ.՝ Գորիսի քաղկոոպում՝ ապրանքագետ:*
*1994թ. ընտրվել է Գորիսի քաղխորհրդի գործկոմի սոցապ բաժնի վարիչի պաշտոնում, 1996թ. ոլորտի վերակազմավորումից հետո նշանակվել սոցիալական ապահովության Գորիսի տարածքային կենտրոնի տնօրեն, 1997թ. վերակազմավորումից հետո՝ սոցիալական ապահովագրության Գորիսի տարածքային կենտրոնի տնօրեն եւ այդ պաշտոնում աշխատել մինչեւ 2000թ.:*
*2000-2007թթ. աշխատել է «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ում՝ Գորիսի տեղամասի պետ, 2007 թվականին՝ «Ադունցներ» ՍՊԸ-ի տնօրեն:*
*2009-2014թթ. աշխատել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում՝ Գորիսի տեղամասի պետ:*
*2014թ. հունիսի 8-ին ընտրվել է Գորիսի քաղաքապետ:*
*1996, 1999, 2002թթ. ընտրվել է Գորիսի ավագանու անդամ:*
*1997 թվականից ՀՀԿ անդամ է:*
*Ամուսնացած է, ունի երկու որդի եւ մեկ դուստր:*

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

*Հարցազրույց ընտրությունների առիթով*

**Գորիս համայնքը նույնպես խոշորացվել է: Համայնքը, բացի Գորիս քաղաքից, ներառում է Ակներ, Վերիշեն, Հարթաշեն, Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Քարահունջ, Որոտան, Շուռնուխ, Բարձրավան, Աղբուլաղ, Վանանդ գյուղերը: Տասներկու բնակավայր ընդգրկող համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ տեղի կունենան 2016թ. սեպտեմբերի 18-ին, որից հետո կդադարեցվեն մինչ այդ գործող պետական կառավարման մարմինների լիազորությունները: Նորակազմ համայնքի ղեկավարի թեկնածու է առաջադրվել 2014 թվականից Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը: Մեր զրույցը համայնքի ղեկավարի թեկնածուի ծրագրերի, համայնքի հիմնախնդիրների, բնակչության՝ ձեւավորվող իշխանությունից ունեցած ակնկալիքների մասին է:**

**– Պարոն Ադունց, նախ փորձեք բնութագրել Գորիս նորաստեղծ համայնքը. տարածքային իմաստով ի՞նչ է այն իրենից ներկայացնում: Համայնքի մեջ մտնող 12 բնակավայրից երկուսը՝ Աղբուլաղը եւ Վանանդը (նախկին Կուրթկուլաղ), որքանով տեղյակ ենք, բնակեցված չեն:**

– Գորիս նորաստեղծ համայնքը Գորիսի նախկին շրջանի մի կարեւորագույն մասն է ներկայացնում, որտեղ բնակիչներն արդեն ունեն պատմականորեն ձեւավորված՝ համատեղ ապրելու, համատեղ գործելու ավանդույթներ, սակայն կա նաեւ հակառակը, որ վերջին վարչատարածքային բաժանմամբ (1995 թվական) յուրաքանչյուր համայնք առանձին միավոր էր՝ իր յուրօրինակ աշխատաոճով, յուրաքանչյուրն՝ իր սոցիալ-տնտեսական ուղղվածությամբ եւ այլն: Այսինքն՝ առկա է ե՛ւ դրական փորձ՝ նախկին ժամանակներում համագործակցելու առումով, ե՛ւ առանձին գործելու ավանդույթ: Նոր վարչատարածքային միավորը բավականին ընդարձակ է, ընդգրկում է Ներքին Խնձորեսկից մինչեւ Շուռնուխ՝ հեռավորությունը մոտ 60-65 կմ: Մեծ մասամբ կայացած բնակավայրեր են՝ իրենց տնտեսությամբ, զարգացման մակարդակով, այնպես որ եւ խնդիրներ կան միացյալ համայնքն ավելի արդյունավետ կառավարելու առումով, միաժամանակ նաեւ կան նպաստավոր պայմաններ, որոնք, համոզված եմ, դրական արդյունք կապահովեն:

**– Դուք ինչպե՞ս եք վերաբերվում համայնքների խոշորացման այս տարբերակին. Գորիսի երբեմնի վարչական շրջանի տարածքում փաստորեն ձեւավորվում է երեք համայնք՝ Գորիս, Տեղ, Տաթեւ: Վերջինս, ի դեպ, արդեն ձեւավորված է: Մեղրիում խոշորացումն այլ ճանապարհով եղավ. երբեմնի**

էջ 4

Հիմնախնդիրներ



# Գորիս համայնքի ղեկավարի թեկնածու Վաչագան Ադունցի նախընտրական ծրագիր

**Գորիսը Հայաստանի Հանրապետության ամենաhին եւ ազգային խիստ արտահայտված դիմագծերով ու հարուստ ավանդույթներով քաղաքներից մեկն է: Երկու տարուց քիչ ավելի ժամանակ է, ինչ ղեկավարում եմ համայնքը: Այդ կարճ ժամանակահատվածում իմ համեստ կարողություններն եմ ներդրել նախընտրական ծրագրիս իրականացման ուղղությամբ: Համայնքի ավագանու, հասարակության ամենատարբեր խավերի ներկայացուցիչների, եւ, իհարկե, Սյունիքի մարզպետարանի օգնությամբ ու աջակցությամբ որոշ ծրագրեր հաջողվել է իրականացնել, որոշների իրագործումն էլ ընթացքի մեջ է, իսկ շատ հարցեր էլ պետք է վերանայել, դրանց իրականացումը պլանավորել նոր ժամանակների պահանջներին համապատասխան, նոր հենքի վրա:**

Կառավարության հայտնի որոշման համաձայն հանրապետությունում շարունակվում է համայնքների խոշորացման քաղաքականությունը: Համաձայն այդ որոշման Գորիս համայնքի մեջ կմիավորվի 12 բնակավայր: Դրանք են՝ Ակները, Վերիշենը, Խնձորեսկը, Ն.Խնձորեսկը, Հարթաշենը, Քարահունջը, Որոտանը, Բարձրավանը, Շուռնուխը, Վանանդը, Աղբուլաղը եւ Գորիսը: Սա նշանակում է, որ ընդլայնվում են համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի աշխատանքային գործունեության թե ծավալները եւ թե դրանց բնագավառները: Ապագա ավագանու եւ համայնքի ղեկավարի գործունեության մեջ որպես աշխատանքային ուղղություն գյուղատնտեսության ծավալների մեծացումն ինքնին բարդ խնդիրներ է առաջադրում նրանց: Իսկ եթե դրան էլ ավելացնենք այն, որ բնակավայրերի հեռավորությունն իրարից չափվում է տասնյակ կիլոմետրերով՝ դժվարությունների պատկերը քիչ թե շատ կամբողջանա:

Որպես համայնքի ղեկավարի թեկնածու իմ նախընտրական ծրագիրը պատրաստելիս առաջնորդվել եմ ժամանակի թելադրած այդ պահանջներով եւ նկատի ունեցել այն, ինչ կիսատ է մնացել իմ նախորդ ծրագրից:

* * *

- Համայնքի ղեկավարի առավել գործունյա աշխատակազմի ձեւավորում՝ համալրված կառավարման ժամանակակից մեթոդներին տիրապետող բարձրակարգ, արհեստավարժ մասնագետներով: Հաշվի առնելով աշխատանքների նոր պայմաններն ու ուղղությունները՝ առավել բծախնդրությամբ ընտրել գյուղատնտեսության հետ առնչվող մասնագետներին: Աշխատակազմում ստեղծել բարձր պատասխանատվության, փոխադարձ հարգանքի ու վստահության մթնոլորտ: Ղեկավար աշխատանք կատարող յուրաքանչյուր անհատ պետք է համոզված լինի, որ ամբողջ համայնքի հաջողությունն ու բարեկեցությունն անմիջականորեն կապ ունեն իր աշխատանքի ու գործունեության հետ:
- Որպես համայնքի ղեկավար պարտավոր եմ հավասարապես ուշադիր լինել համայնքի բոլոր բնակավայրերի նկատմամբ, հնարավորության սահմաններում նպաստել դրանց դինամիկ ու համաչափ զարգացմանը՝ անկախ բնակավայրերի մեծությունից: Հարկ կլինի նկատի ունենալ նաեւ առանձին գյուղական բնակավայրերում ձեւավորված ավանդույթներն ու սովորությունները:
- Բնակչության հետ տարվող աշխատանքները պլանավորելիս քաղաքացիների ընդունելություն նախատեսել ոչ միայն կենտրոնական գրասենյակում, այլ նաեւ տեղերում, ըստ բնակության վայրի՝ այդ մասին կանխավ տեղյակ պահելով նրանց:
- Համայնքի բնակիչների հավատի ու վստահության ամրապնդում: Հնարավորինս ակտիվացնել նրանց մասնակցությունը համայնքին հետաքրքրող հարցերի քննարկմանն ու լուծմանը: Հոգատար եւ ուշադիր վերաբերմունք ապահովել քաղաքացիների դիմումների նկատմամբ:
- Ապահովել համայնքային բյուջեի անընդհատ աճ: Սեփական մուտքերի կատարումն ապահովել 100%-ով: Մասնակից լինել բազմաբնույթ ծրագրերին, որպեսզի հնարավոր լինի ծրագրային ներդրումներով լրացնել բյուջետային միջոցների անբավարարությունը: Դրանից զատ փնտրել եւ գտնել բյուջեի համալրման այլ աղբյուրներ:
- Հետամուտ լինել, որ Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման ազգային ծրագրի շրջանակներում լուծվի նաեւ Գորիսը շրջանցող ավտոխճուղու կառուցման հարցը:
- Մշակել համայնքում իրականացվելիք երիտասարդական քաղաքականության հայեցակարգ՝ ներառելով երիտասարդության հետ առնչվող բոլոր հարցերը (ռազմահայրենասիրական, ֆիզիկական դաստիարակության, զբաղվածության եւ այլն):

Կառավարության առջեւ հարց բարձրացնել առաջիկա տարիներին նախագծելու եւ կառուցելու տիպային մարզադպրոց:

- Հետամուտ լինել զոհված եւ վիրավոր ազատամարտիկների ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը: Ուժեղացնել կապը համայնքի տարածքում գտնվող զինվորական ստորաբաժանումների եւ ուսումնական հաստատությունների միջեւ: Հայ զինվորի նկատմամբ ձեւավորել համընդհանուր սիրո ու հարգանքի մթնոլորտ:
- Կրթական համակարգի մեջ տեսնել մեր հայրենիքի վաղվա օրը. ինչպիսին է այսօր մեր նախակրթարանը, դպրոցը, քոլեջն ու համալսարանը, այդպիսին էլ մեր հայրենիքն է լինելու վաղը: Աջակցել կրթական օջախների գործունեության արդյունավետության բարձրացմանը:
- Նոր շունչ տալ համայնքի գյուղական բնակավայրերում խորհրդային տարիներին ստեղծված փառքի թանգարաններին, դրանք դարձնել աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության, մեր հայրերի, պապերի հիշատակի պահպանման օջախներ:
- Օրենքի սահմաններում ուժեղացնել հսկողությունն իրավապահ մարմինների գործունեության հանդեպ: Համագործակցել իրավակարգի ամրապնդման գործում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:
- Համագործակցությունը միջազգային կառույցների տեղական գրասենյակների եւ քույր քաղաքների հետ պետք է նպաստի համայնքի թե՛ տնտեսական, թե՛ բարոյական զարգացմանը:
- Գորիս քաղաքի ճարտարապետական յուրահատուկ կառուցվածքը մեր տարածաշրջանի, նաեւ Հայաստան աշխարհի այցեքարտերից մեկն է: Մեր համայնքի յուրաքանչյուր անդամի պարտքն է պահպանել, առավել գեղեցկացնել եւ սերունդներին փոխանցել այն: Համայնքի հոգեւոր-մշակութային ավանդույթների պահպանումն ու հարստացումը նրա հետագա զարգացման երաշխիքներից են: Մասնավորապես հարկ է ամբողջապես վերանայել Գորիս քաղաքի մշակութային կառավարման մեխանիզմը: Մշակույթի կենտրոնի, թատրոնի, թանգարանների, պատկերասրահների, զբոսայգիների, պատմամշակութային հուշարձանների պահպանության ծառայության գործունեության ներկայիս մակարդակը համարել ոչ բավարար եւ առաջադրել ոլորտի բարելավման նոր ծրագրեր:
- Մարզում զբոսաշրջության զարգացման մեջ յուրահատուկ է մեր համայնքի դերակատարումը, որը պետք է անընդհատ զարգացնել: Դրա համար անհրաժեշտ է պահպանել ու վերականգնել պատմամշակութային ժառանգությունը, համայնքում բարեկարգ տեսքի բերել ենթակառուցվածքները, ստեղծել նորերը: Բարձրացնել կազմակերպվող տոնակատարությունների էսթետիկական եւ գեղարվեստական մակարդակը:

Զբոսաշրջության համար համայնքը հրապուրիչ եւ հարմարավետ չի կարող լինել, եթե այն չլինի մաքուր, բարետես ու բարեկարգ: Խիստ անհրաժեշտություն է կոյուղու գլխավոր կոլեկտորի եւ մաքրման կայանի կառուցումը, միաժամանակ

էջ 7

Ինչ են խոսում քաղաքում

# Կուզեմ էս քաղաքի նախշը դառնաս՝ ասել է գորիսեցի Լուսիկ Գրիգորյանը, երբ Վաչագան Ադունցը փոքր երեխա էր

**Գորիսեցի Լուսիկ Գրիգորյանն այս տարվա հուլիսի 24-ին դարձավ 101 տարեկան: Կյանք տեսած կին է Լուսիկ տատիկը, թացն ու չորն իրարից ջոկող, լավով ուրախացող: Տարիները նրան բերել են այն համոզման,որ, իրոք, ճուտը ձվում է երեւում: Մի օր, կարտոֆիլով լի տոպրակները ձեռքին, տուն էր գալիս: Տոպրակները շատ ծանր էին, շատ երիտասարդների նա հանդիպեց տուն դառնալու ճանապարհին, բայց ոչ մեկը նրան օգնության ձեռք չմեկնեց: Հենց այն պահին, երբ նա այլեւս ուժ չուներ առաջ շարժվելու, կողքին կանգնեց փոքրիկ Վաչագանը՝ ես քեզ կօգնեմ: Օրհնվես դու՝ Վաչիկ տղա, էդ երեւի աստված ուղարկեց քեզ՝ ասում է Լուսիկը, հետո էլ թե՝ նախշուն տղա ես, կուզեմ դառնաս այս քաղաքի նախշը: Այդ օրվանից Վաչագանը դարձավ Լուսիկի աչքի լույսը…**

Անցան տարիներ: Տարիներն ավելացրին Լուսիկի տարիքը եւ տարիքի հետ նաեւ նրա «կոչումը». նա դարձավ տատիկ: Տարիների հետ մեծացավ նաեւ Վաչիկ տղան: Սակայն նա միշտ Լուսիկ տատիկի համար մնաց խոխա: Լուսիկ տատիկի սիրելի զբաղմունքներից մեկն էլ օղի թորելն է: Ամեն նոր տարուն նա Վաչագանին սեւ թթի օղի է ուղարկում, հետն էլ՝ իր օրհնանքը: Մի օր, դառնալով իր Սոնա աղջկան, ասում է՝ մեր Վաչոն իր նման նախշուն մեքենա է գնել: Սոնա, էն թթի օղուց բեր, ես ու դու մի բաժակ բարձրացնենք, շնորհավորենք: Հենց այդ պահին մեկը դուռը բացեց եւ ներս մտավ. Վաչագանի մայրն է:

– Շնորհավոր Վաչագանի մեքենան, ղեկը թող միշտ աջում լինի՝ բարեմաղթեց Լուսիկ տատիկը:

Անցան տարիներ: Էն խոխան՝ Վաչագան Ադունցը, ընտրվեց Գորիսի քաղաքապետ: Լուսիկ տատիկը հիշեց «կուզեմ էս քաղաքի նախշը դառնաս» իր խոսքերը ու ժպտաց: Սոնա աղջիկն էլ թե՝ ման, հեռատես էիր դու, իմաստուն:

## Վաչագան Ադունցն ընդհանրական մտածելակերպ ունի՝ ասում է Սպարտակ Հակոբյանը

Իմ հաջորդ հանդիպումը «Հայկժորես» ՍՊԸ ղեկավար Սպարտակ Հակոբյանի հետ է, մարդ, ում համար Գորիսն իր հավատամքն է: Դեսից-դենից խոսելուց հետո անցնում եմ բուն թեմային՝ Սպարտակ, ինչ կարծիք ունես համայնքապետի թեկնածու Վաչագան Ադունցի մասին, ով արդեն երկու տարի քաղաքապետ է աշխատել:

– Նրա հետ մոտիկ եմ, լավ հարաբերություններ ունեմ: Փոքր քաղաք է Գորիսը, փոքր բյուջե ունի: Խնդիրներն էլ շատ են: Ես ականատես եղա, թե նա ինչպես է եղած սուղ հնարավորությունները ռացիոնալ օգտագործում: Ցանկացած տիպի հարաբերությունում, ցանկացած գործում նա ամեն խնդիր լուծում է քաղաքակիրթ ձեւով: Վաչագան Ադունցն ընդհանրական մտածելակերպի տեր մարդ է, այդ հատկանիշը, որ ի վերուստ է տրվում, հատուկ է ոչ բոլորին, իսկ դա յուրաքանչյուր համայնքապետի համար շատ կարեւոր է, եւ դա այն հզոր զենքն է, որով նա կարողանում է իր շուրջը համախմբել տարբեր տեսակետներ, հայացքներ ունեցող մարդկանց, նրանց ուժերը նպատակամղել ընդհանուր, կարեւոր գործերի կատարմանը:

Գորիսին հուզող խնդիրները մեկ օրում չեն կարող լուծվել: Համբերություն ունենանք եւ նաեւ մեր օգնության ձեռքը մեկնենք իշխանությանը, որ Գորիսը դառնա օտարին անգամ իր գիրկը կանչող քաղաք: Վաչագան Ադունցը շատ մտահղացումներ ունի: Նրան պետք է հնարավորություն տալ դրանք կյանքի կոչելու համար: Ահա ինչու սեպտեմբերի 18-ին խոշորացված համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրված Վաչագան Ադունցին պիտի տանք մեր քվեն: Համոզված եմ, նա համայնքի բյուջեն կրկին նպատակային է ծախսելու, յուրաքանչյուր լումայի համար հաշվետու է լինելու համայնքին, նրա գործելակերպում իշխելու է թափանցիկությունը:

Նրան ընտրելով՝ մենք կունենանք արժանապատիվ համայնքապետ: Իսկ դա կարեւոր է ոչ միայն մեզ՝ ընտրողներիս, այլեւ քույր քաղաքներին ներկայանալու համար: Սովորաբար ասում ենք՝ ասա, ով է ընկերդ, ասեմ թե դու ով ես: Ժողովրդական այս խոսքը նորովի կձեւակերպեմ՝ ցույց տուր համայնքիդ ղեկավարին, եւ ես կասեմ՝ ինչպիսին է քո համայնքը:

## Նրա մոտ լավ է ստացվում՝ ասում է սրտաբան Կարեն Համբարձումյանը

Երբ հանդիպեցի Կարեն Համբարձումյանին, ինձ թվաց, թե «հարցեր բժշկին» ժանն է: Աջ ու ձախից հարցեր՝ բնականաբար առողջապահության ոլորտից: Վերջապես ինձ հաջողվեց նրան կտրել առօրյա գործերից եւ տեղափոխել մի այլ աշխարհ, ուր ընտրություն պիտի լինի առաջիկայում, ուր խոշորացված համայնքի ղեկավար պիտի ընտրեն:

– Երկու տարին, բնականաբար, քիչ ժամանակ է մարդու արածը գնահատելու, գնահատական տալու համար: Բայց Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցի պարագայում կարող եմ ասել, որ ժամանակը նրա օգտին է: Նա Գորիսի համար օգտակար մարդ է՝ օժտված դրական լիցքերով: Իմ տպավորությունը նրա մասին այսպիսին է՝ զարգացած, բարեկիրթ, օրինակելի մարդ:

Ընդհանրապես ղեկավարը պիտի սրտացավ լինի եւ առաջին հերթին՝ իր ղեկավարած համայնքի բնակչի հանդեպ: Ղեկավարը կարող է հնարավորություններ չունենալ մարդկանց հոգսերին սատար կանգնելու, բայց ունենա սրտացավություն, սրտացավ վերաբերմունք ցուցաբերի նրա նկատմամբ: Նա բազմիցս դիմել է ինձ, ինչպես ժողովուրդն է ասում, սրտաբանական հիվանդանոցի բժշկիս՝ սոցիալապես անապահով խավի այս կամ այն անդամին օգնելու համար: Ասելիքս այն է, որ Վաչագան Ադունցն անտարբեր մարդ չէ: Իսկ անտարբերությունն այսօր աշխարհի աղետների աղետն է, չարիքը:

Ընտրվելով խոշորացված համայնքի ղեկավար, իմ կարծիքով՝ նա արդեն հնարավորություն կունենա բարեկարգելու-ասֆալտապատելու մայրուղուց սրտաբանական հիվանդանոց տանող ճանապարհը: Այդ հարցում մենք էլ մեր ներդրումը կունենանք:

Ես Վաչագան Ադունցին մի առաջարկ ունեմ՝ այսուհետ ավելի մեծ ուշադրություն դարձնել համայնքի մշակութային, հոգեւոր կյանքին: Հեռուստատեսային սերիալներում պրոպագանդվող բարքերը հարիր չեն մեր ժողովրդի նիստ ու կացին: Դրանք ազդում են հայոց արժեհամակարգերի վրա բացասական առումով, դրանք այլ արժեհամակարգեր են քարոզում, որի պետքը մենք չունենք: Իսկ այսօրվա երիտասարդ սերունդը հեշտությամբ կարող է «սեփականաշնորհել» օտար արժեհամակարգերը, որի հետեւանքով կունենանք հայոց բարոյականությանը ոչ հարիր երիտասարդություն: Նրանք յուրաքանչյուր հասարակարգի եւ ժամանակաշրջանի բարոմետրն են, շարժիչ ուժը:

Այնպես որ, արժե նոր ծրագրեր կազմել համայնքի մշակութային, հոգեւոր կյանքի զարգացման համար:

Վաչագան Ադունցի մոտ ղեկավարելը լավ է ստացվում: Արժե, որ նա շարունակի ղեկավարել Գորիս համայնքը:



Լուսիկ Գրիգորյան



Սպարտակ Հակոբյան



Կարեն Համբարձումյան



Խասան Հարությունյան



Արտուշ Ղուկասյան

## Վաչագան Ադունցն արժանի է համայնքապետի աթոռին՝ ասում է վաստակաշատ շինարար Խասան Հարությունյանը

Վաչագան Ադունցին երջանիկ քաղաքապետ եմ համարում: Դա նրա համար, որ նրա օրոք գորիսեցիների վաղեմի երազանքն իրականություն է դառնում. Սերո Խանզադյանի տուն-թանգարանը վերջապես կհամապատասխանի իր անվանը. այժմ այդտեղ սկսվել են կապիտալ վերանորոգման աշխատանքներ, եւ Գորիսը շուտով կունենա եւս մեկ գործող թանգարան, ու այցելողները կծանոթանան մեծ արձակագրի կյանքին ու գրական գործունեությանը, կապրեն Սերոյով: Տուն-թանգարանի վերանորոգումը կարեւոր է նաեւ այս տեսանկյունից. Գորիս են այցելում բազմաթիվ զբոսաշրջիկներ աշխարհի տարբեր անկյուններից: Կյանքը ցույց է տվել, որ զբոսաշրջային ֆիրմաներն այն քաղաքներն են ընտրում իրենց երթուղիներում, ուր կան թանգարաններ, քաղաքներն ունեն ինքնատիպ դիմագիծ, պատմամշակութային հարուստ ժառանգություն: Իսկ Գորիսն ունի: Գորիսի մասին միշտ ասում են՝ թանգարան բաց երկնքի տակ: Եվ այսօր գորիսեցին պետք է հպարտանա ոչ միայն անձեռակերտ իր հուշարձաններով՝ ժայռերով, քարանձավներով, այլեւ տուն-թանգարաններով:

Միայն Սերո Խանզադյանի տուն-թանգարանի վերանորոգումը չէ, որ սկսվել է Վաչագան Ադունցի քաղաքապետության շրջանում: Կատարվում են նաեւ բարեկարգման աշխատանքներ, որոշ դրական միտում կա աղբահանության կազմակերպման գործում: Քաղաքի մաքրության աստիճանն արտացոլում է յուրաքանչյուրիս վերաբերմունքը քաղաքի հանդեպ: Բնականաբար, առաջին հերթին քաղաքապետարանի կատարած աշխատանքն է երեւում: Ասելիքս այն է, որ մաքրության կազմակերպման վիճակն օր օրի պետք է բարելավվի, դրանում մենք՝ քաղաքացիներս, պետք է նույնպես շահագրգիռ լինենք: Գրիգոր Տաթեւացու անունը կրող հրապարակում տեղադրվել են նստարաններ, կա նաեւ ջրավազան: Երեկոները հիմա գորիսեցիները ոչ միայն ճեմում են հրապարակում, այլեւ նստում նստարաններին՝ հանգստանալու, զրուցելու: Նրանցից ոմանք արեւածաղիկ են չրթում եւ մնացորդները թափում գետնին: Ծխախոտ ծխելուց հետո էլ ոմանք ծխախոտի մնացորդներն են թափում գետնին: Մի՞թե չի կարելի այդ մնացորդները լցնել նստարանների հարեւանությամբ գտնվող ամանների մեջ: Հնարավոր է: Պարզապես պետք է մաքրասեր լինել, հարգել ու սիրել մեր քաղաքը, ցուցաբերել տարրական կուլտուրա:

Գրիգոր Տաթեւացու հարեւանությամբ է գտնվում խաղաղության զբոսայգին: Այդտեղ հաճախակի են կազմակերպվում միջոցառումներ: Զբոսայգու մի հատվածում տեղադրված է Վիենի պուրակ ցուցանակը, իսկ դրա կողքին մարդաբոյ մոլախոտերի «հանքավայրն» է: Այդ պատկերը հարիր չէ մեր քաղաքին, այդ «հանքավայրն» արագ պետք է վերացնել, բարեկարգել, ծաղկապատել կամ կանաչապատել: Համայնքի ղեկավար ընտրվելուց հետո այդ խնդիրն իր ուշադրության կենտրոնում պետք է պահի Վաչագան Ադունցը:

Ամեն անգամ, երբ անցնում եմ յոթ աղբյուրի կողքով, անսքող հպարտություն եմ ապրում. դրա կառուցմանը մասնակցել է նաեւ իմ պապը՝ Հարություն Քաթանյանը: Վայրկյաններ անց հպարտությունս իր տեղը զիջում է հիասթափությանը: Յոթ աղբյուրի որոշ ծորակներ չեն աշխատում, պատերը հոսող ջրերից ժանգոտվել են: Մի՞թե պիտի քաղաքապետները գան ու գնան, իսկ յոթ աղբյուրը գտնվի անմխիթար վիճակում: Իսկ այն մեր սերն է, մեր կարոտը: Կուզեի, որ ընտրվելուց հետո Վաչագան Ադունցն այս հարցին էլ լուծում տար եւ շատ արագ:

Վաչագան Ադունցն այս անգամ միայն Գորիսինը չէ: Նա խոշորացված համայնքի ղեկավար է լինելու: Գործի բերումով շատ եմ հանդիպում նրան եւ մարզպետին: Քննարկում ենք տարածաշրջանին հուզող խնդիրներ: Ես զգում եմ, թե ինչպիսի սրտացավությամբ է Վաչագան Ադունցը վերաբերվում քաղաքին առնչվող հարցերին, ուղիներ որոնում խնդիրները լուծելու համար: Շատ չի ուշանա, իմ կողմից բարձ-

էջ 7

Հարցազրույց ընտրություններից առաջ

# ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ. «Գորիս համայնքին՝ նվիրումս, փորձս, գիտելիքներս»

**«Սյունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է Գորիս համայնքի ղեկավարի թեկնածու Վաչագան Ադունցը**

էջ 1

**վարչական շրջանի բնակավայրերը ներառվել են մեկ համայնքի մեջ: Առհասարակ ինչպե՞ս եք վերաբերվում համայնքների խոշորացմանը: Մարդիկ վկայակոչում են տնտեսությունների թեկուզ խրուշչովյան ռեֆորմը, որի հետեւանքով մեր գյուղերը մեծ վնաս կրեցին:**

– Քննարկումներից մեկի ժամանակ ինքս էլ տեսակետ եմ ներկայացրել: Եթե սուբյեկտիվ վերաբերմունք ունենայի, միգուցե համայնքների խոշորացմամբ չոգեւորվեի, քանի որ ընդամենը երկու տարի է, ինչ ընտրվել եմ համայնքի ղեկավար, ունեի բազմաթիվ ծրագրեր, առաջիկայում դրանք պիտի կյանքի կոչվեին: Սակայն վստահ եմ, որ համայնքների խոշորացումը ճիշտ քայլ է, որովհետեւ այսօրվա մեր ունեցած հնարավորությունների բաղդատումը ճիշտ չեմ համարում, առանց այն էլ մեծ հնարավորություններ չունենք (միայն ֆինանսական հնարավորությունները նկատի չունեմ), եւ տարանջատված մնալու վիճակը մեզ լավ օրի չէր բերի, դրանում արդեն համոզվել ենք: Ըստ իս՝ համերաշխությունը, համախմբվածությունը, համագործակցությունը, միջոցների մեկտեղումը միայն օգուտ կարող են բերել: Նույնը նաեւ համայնքների խոշորացման դեպքում: Այլ հարց է, թե իրականում ինչպես ենք կյանքի կոչելու այդ գաղափարը: Ինչպես բազմաթիվ անգամ կրկնել եմ՝ լավ օրենսդրություն մշակելը քիչ է, պետք է նաեւ օրենքները կիրառել կյանքում: Կարծում եմ՝ համայնքների խոշորացումը ճիշտ կիրառելով միայն դրական արդյունքներ կստանանք: Ասեմ՝ տարբեր սպասարկող կազմակերպությունների ձեւավորմամբ, տրանսպորտային հնարավորությունների, գյուղատնտեսության զարգացման, մեքենատրակտորային հավաքակայաններ ստեղծելու առումներով խոշոր համայնքն արդարացված է: Չէ՞ որ ժամանակին Գորիսն ուներ շրջանի կարգավիճակ: Եվ շրջանում նման ծառայություններ գործում էին:

**– Թույլ տվեք ընդհատել: Կարելի՞ է ենթադրել, որ ձեր խոսքի տրամաբանությունը հանգեցնում է նրան, որ ապագայում սխալված չենք լինի, եթե Գորիսի շրջանում ձեւավորվող երեք համայնքը դարձնենք մեկ համայնք:**

– Նույնիսկ ենթադրում եմ, որ հաջորդ քայլը դա կլինի, ուղղակի երբ զուգահեռ անցկացրիք Մեղրու շրջանի հետ, ասեմ, որ ե՛ւ բնակչության թվի առումով, ե՛ւ բնակավայրերի թվի առումով Մեղրին ու Գորիսը համեմատելի չեն, երեւի սկզբնական շրջանում Գորիսի տարածաշրջանում երեք համայնք ձեւավորելն արդարացված է: Ենթադրում եմ, որ հետագայում Գորիս համայնքը ձեռք կբերի նախկին շրջանի բոլոր համայնքները միավորողի առաքելություն:

**– Փորձենք հիշել կառավարության վերջին տարիների որոշումները՝ Գորիս քաղաքին եւ համայնքի մեջ մտնող բնակավայրերին առնչվող: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի N973 որոշումը կամ ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի որոշումը «Գորիս» քրեակատարողական հիմնարկը Գորիս քաղաքից դուրս բերելու մասին կամ ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 31-ի N77-Ա «Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման ծրագիրը հաստատելու մասին» որոշումը: Երկու տարի է՝ գլխավորում եք Գորիս քաղաքը եւ, անշուշտ, քաջատեղյակ եք՝ ինչ ընթացքի մեջ են կառավարության որոշումները՝ կապված Գորիս քաղաքի հետ, կարո՞ղ եք մի փոքրիկ վերլուծություն կատարել:**

– Կառավարության ձեր նշած որոշումներն էլ ընթացքի մեջ են, այլ բան է, թե ինչպիսի ինտենսիվությամբ, ինչ չափով են կյանքի կոչվել կամ կյանքի կոչվում: Ինձ հայտնի է, որ վերջին տարիներին քաղաքական, տնտեսական ոլորտներում դժվարին իրավիճակ էր ստեղծվել՝ կապված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, ինչը բացասական ազդեցություն ունեցավ այդ ծրագրերի իրականացման ընթացքի վրա: Բայց որ ծրագրերն ընթացքի մեջ են, ես դա հավաստիացնում եմ, քանզի եթե խոսքը զբոսաշրջությանն է առնչվում, այդ ծրագրով նախատեսված մի քանի կետեր արդեն իրականացվել են, մյուսներն ընթացքի մեջ են, կառավարությունը տարբեր նախարարություններով բազմաթիվ ծրագրեր է նախատեսել Գորիսում իրականացնելու, օրինակ՝ Համաշխարհային բանկի՝ տեղական կառույցների եւ ենթակառույցների զարգացման ծրագիրը՝ մոտավորապես 12 մլն դոլարին համարժեք դրամ հինգ տարվա ընթացքում ներդրվելու է Գորիսում: Դա վարկային ծրագիր է, որ նպաստելու է զբոսաշրջության զարգացմանը, ծրագրի շրջանակում ստեղծվելու են զբոսաշրջությանը նպաստող ենթակառուցվածքներ, վերականգնվելու են զբոսայգիները, հրապարակները, պատմական շենքերի ճակատային մասերը, ընդհանրապես պատմական Գորիսի կենտրոնը, հնարավորություն ենք ընձեռելու զարգացնել մասնավոր բիզնեսը՝ զբոսաշրջային ուղղվածություն ունեցող:

> *Ինչ վերաբերում է «Գորիս» քրեակատարողական հիմնարկը տեղափոխելուն, բոլորս գիտենք, որ կար կառավարության համապատասխան որոշումը, եւ տարիներ առաջ նախատեսվել էր տեղափոխությունը սկսել, տեղանքը հատկացվել էր, նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրվել էին, սակայն վերահաս ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանքով գործը ձգձգվեց, կանգ առավ, բայց ծրագրից հանված չէ:*

**– Իսկ Գորիսի զարգացման հայեցակարգը (10 հունիսի 2011թ., N973), ըստ էության, համայնքի խոշորացումից հետո պետք է վերանայվի՞, թե՞...**

– Բնականաբար, այո: Բայց որոշ նախանշումներ կմնան ուժի մեջ: Օրինակ, արդեն անցած տարի պատվիրել էինք, եւ հիմա ավարտին է հասցվել (նախարարությունները իրենց հավանությունը տվել են) Գորիս քաղաքի թարմացված գլխավոր հատակագծի տարբերակը, որն իր մեջ ներառում է պատմամշակութային արժեքների պահպանությունը: Եվ նորացված գլխավոր հատակագիծը կարեւորագույն փաստաթուղթ է Գորիս քաղաքի ռազմավարական զարգացման համար:

**– Եթե անկեղծ լինենք, սեպտեմբերի 18-ի ընտրություններում դուք մրցակից չունեք, ինչպե՞ս եք վերաբերվում այդ իրողությանը:**

– Ես մրցակից ունեմ:

**– Դուք կարող եք այդպես մտածել, բայց վերջին երեք տարում ամենատարբեր հարթակներից այնքան շատ խոսվեց Գորիսում լարված իրավիճակի մասին, Գորիսում ձեւավորված ինչ-որ ընդդիմության մասին: Բայց երբ եկավ նույն այդ ընդդիմության երեւալու, սեփական դեմքը ցուցանելու պահը, ապա ոչ մի այլընտրանք գործող քաղաքապետին չտեսանք: Ինչո՞վ եք դա բացատրում:**

– Նախորդ անգամ, երբ ընտրվում էի, ասել եմ, որ Գորիսում ոչ մի լարվածություն չկա, լարվածությունն իմիտացիա էր, բնակչությունը ոչ թե լարված, այլ միասնական է եղել ու կա: Հակառակ բնութագրումն առանձին մարդկանց, առանձին խմբերի՝ իրավիճակն այդպես ներկայացնելու ցանկությունն էր, եւ հերթական անգամ ապացուցվեց, որ Գորիսի բնակչությունը նպատակադրված է խաղաղ ու համերաշխ ապրելու եւ գործելու: Երկու տարվա աշխատանքի ընթացքում դրանում խորապես համոզվել եմ, քանզի իմ կողքին կանգնել էին ոչ միայն ինձ ձայն տվողները, այլեւ չտվողները: Որովհետեւ բոլորն էլ համոզվել էին մի բանում, որ նպատակս, իմ թիմի նպատակն ընդամենը քաղաքը զարգացնելն է, քաղաքի ավելի բարետես, ավելի զարգացած տեսլական ունենալն է, ինչը նպաստել է, որ համայնքի բնակիչները հավատան մեզ եւ կանգնեն մեր կողքին: Նաեւ նշեմ, որ երկու տարին բավական չէ սեփական խոսքը տեղ հասցնելու, նախանշված ծրագրերն իրականացնելու համար, թեպետ ասեմ, որ իմ նախընտրական ծրագրի մեծ մասն ընթացքի մեջ է, բայց նաեւ հեռագնա ծրագրեր ունեինք, որոնց մասին պարբերաբար իրազեկում էինք բնակչությանը: Երեւի դա է պատճառը, որ թե՛ մեր քաղաքական ընդդիմախոսները, թե՛ կողմնակիցներն այն համոզման եկան, որ իմ ծրագրերն իրականացման ճանապարհին են: Դա վերաբերում է զուտ Գորիս քաղաքին, բայց մենք այլեւս ներկայացնելու ենք եւս 11 բնակավայր: Ես շնորհակալ եմ իմ գործընկերներին եւ համայնքի բնակիչներին, ովքեր վստահում են ինձ ու հավատում, որ կարող ենք միասին ընդհանուր համայնքի համար ծրագրեր մշակել ու իրականացնել:

**– Այսինքն՝ կարելի՞ է ենթադրել, որ, մրցակից չունենալը, այնուամենայնիվ, ձեր՝ թեկնածու, լիդեր լինելու հետ համաձայնության նշան է նաեւ ընդդիմախոսներից կողմից:**

– Նաեւ կարելի է այդպես համարել:

**– Փաստորեն քաղաքական պայքարը, եթե կարելի է այդպես ասել, սեպտեմբերի 18-ին Գորիս համայնքում կծավալվի ավագանու շուրջ: Մարզի մյուս համայնքներում, օրինակ, ավագանու տեղերի համար նման պայքար չի սպասվում, ինչպես Գորիսում: Ինչո՞վ եք դա բացատրում:**

– Ավագանու դերը կարեւորելով: Ինքս միշտ աշխատել եմ մի սկզբունքով, ինչպես նաեւ իմ թիմը. քաղաքը, այսօր նաեւ համայնքը ղեկավարներինը չէ, կոնկրետ՝ համայնքապետինը եւ նրա աշխատակազմինը չէ, համայնքը բնակիչներն են, մենք ընդամենը ծառաներ եւ կառավարիչներ ենք ու պետք է ճիշտ ծառայենք մեր հարկատուներին, համայնքի բնակիչներին, եւ դրան հասնելու համար շատ կարեւոր է բնակիչների կարծիքը: Ուստի միշտ կարեւորել եմ հանրային կարծիքը, առավել եւս հանրության կողմից ընտրված ավագանու կարծիքը: Միգուցե մեր հորդորն է նաեւ նպաստել, որ Գորիսում ավագանու նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջանա: Համոզված եմ՝ ճիշտ գործող ավագանին (ինքս էլ երեք անգամ ավագանու անդամ եմ ընտրվել) մեծ նպաստ կբերի այդ ինստիտուտի հետագա կայացմանն ու համայնքային խնդիրների լուծմանը:

**– Դուք մեր հարցերին միշտ համարձակորեն պատասխանել եք, բայց տեսեք՝ Գորիսում այն տեսակետն է շրջանառվում, թե իբր հանրության՝ գործող իշխանությանն ընդդիմադիր թեւը փորձում է Գորիսում տեղական իշխանությանը հակակշիռ թեւ ստեղծել ավագանու միջոցով: Եվ իբր դուք էլ ապագա ավագանու կազմում փորձում եք համակիր մեծամասնություն ձեւավորել: Առաջին հայացքից միգուցե եւ դա նորմալ է ու տեղավորվում է խաղի տրամաբանության մեջ: Բայց... դուք երկու տարի առաջ ընտրողին հղած խոսքում շատ հետաքրքիր մտքեր եք արտահայտել. ա) համագործակցության ձեռք եմ մեկնում բոլորին, բ) կլինեմ յուրաքանչյուրիդ ընկերն ու բարեկամը՝ անկախ կուսակցական պատկանելությունից եւ քաղաքական կողմնորոշումից, գ) գալիս եմ վերականգնելու մեզանում ճաք տված համերաշխությունը: Եվ ուրեմն՝ ինչո՞ւ այսօր ձեզ համար չպետք է միեւնույնը լինի, թե ովքեր կընտրվեն ավագանու անդամ:**

– Շնորհակալություն հետաքրքիր հարցի համար: Ասեմ, որ երեւի այդ դեպքում այնքան էլ ճիշտ չէ շրջանառվող կարծիքը, որովհետեւ իմ աշխատանքի ընթացքում ես յուրային կամ ոչ յուրային չեմ ունեցել, եւ ավագանու անդամների հանդեպ, անկախ նրանց դիրքորոշումից եւ հայացքներից, եղել եմ հարգանքով, միշտ հակված եմ եղել համագործակցելու: Հիմա էլ նույնն եմ մտածում: Ավելին ասեմ. ընդդիմադիր կեցվածք ունեցող ավագանու անդամներն ավելի մեծ նպաստ են բերել ու բերում համայնքի զարգացմանը, եւ երբեք հակասություններից չեմ վախեցել ու մանավանդ խուսափել, քանզի կարծում եմ, որ դրանք, ի վերջո, հանգեցնում են առաջընթացի: Ինչ վերաբերում է թիմեր ձեւավորելուն, ես ընդդիմադիր թիմ չեմ տեսնում ձեւավորվող, քանզի եթե կան տարբեր կուսակցություններ ներկայացնող թեկնածուներ, ապա դա չի նշանակում ընդդիմադիր թիմ ձեւավորել: Ընդամենը բազմակուսակցական առաջադրումներ են եղել, որ ենթադրում է բազմակարծություն: Իսկ եթե թեկնածուների մեջ կան մի քանի հոգի՝ ինձ հարազատ-բարեկամ, դա էլ չի նշանակում, թե ես եմ թիմ ձեւավորում: Բացարձակապես ոչ, որովհետեւ թիմ ձեւավորելու համար ձեռքի տակ ցուցակ կունենայի: Եթե փորփրեք, կիմանաք, որ ես ոչ ցուցակ ունեմ, ոչ էլ մտադրություն ունեմ համակիրների ու նվիրյալների սեփական թիմ ձեւավորել: Կարծում եմ՝ Գորիսում նման գործելակերպը տեղ չունի, ոչ միայն ցանկալի չէ, այլեւ՝ անթույլատրելի:

**– Պաշտոնավարման երկու տարվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ դուք հաշվետվություն եք հրապարակել. տեղյակ ենք ձեր գործունեության մանրամասներին: Եվ, այնուհանդերձ, ո՞րն եք համարում ձեր երկու տարվա աշխատանքի գլխավոր արդյունքը:**

– Շատ եմ կարեւորում գորիսեցիների՝ քաղաքի հոգսերով ապրելու ձգտումը, չեմ նշում համերաշխությունը, քանզի դա եղել է, կա ու լինելու է: Ցանկանում եմ, որ մեր բնակիչները համայնքային կյանքով ապրեն առավել ակտիվ: Իրենց դարպասները բացեն եւ բնակարաններից դուրս գան: Ինձ թվում է, որ ինչ-որ չափով դա մեզ հաջողվել է: Երկրորդ կարեւոր արդյունքը կարգապահությունն է, այն, որ մարդիկ մասնակցում են միջոցառումներին, քննարկում են քաղաքի մաքրության խնդիրները. դա ինքնին նշանակում է, որ թմբիրից դուրս ենք գալիս եւ սկսում միասին մտածել քաղաքի մասին: Կարեւոր է, որ քաղաքը լինի բոլորինս, բոլորս քաղաքով ապրենք, այսօր արդեն՝ համայնքով: Հաջորդ կարեւոր արդյունքը, ինչը տեսանելի է, այն է, որ համայնքային կառույցների աշխատակիցների պատասխանատվությունն է էականորեն բարձրացել: Ինքս որ ոլորտում աշխատել եմ, ջանացել եմ լինել կարգապահ եւ անձնական օրինակով ձգտել, որ աշխատակիցներն էլ լինեն այդպիսին: Կարեւորում եմ նաեւ մեր կատարած նախնական աշխատանքը, որի շնորհիվ տարբեր միջազգային կառույցներ, տարբեր գերատեսչություններ, նախարարություններ հետաքրքրված են Գորիսով,

## Համայնքային ընտրությունների առիթով

եւ առաջիկայում ունենք լուրջ ծրագրեր, որոնք իսկապես իրականություն կդառնան: Համոզված եմ` այդ ամենի շնորհիվ մեր համայնքը շատ ներկայանալի, գրավիչ տեսք կունենա ու առավել եւս ապրելու եւ աշխատելու առումով հարմարավետ կլինի բնակիչների համար:

**– Ի՞նչը ձեզ չհաջողվեց անցած երկու տարում. ծրագրել էիք, բայց չհաջողվեց իրագործել, որի համար ափսոսանքի զգացում ունեք:**

– Շատ բան եմ ծրագրել. պատկերավոր ասած` երբ գլուխս դնում եմ բարձին, պատկերացնում եմ բարեկարգ, եվրոպական չափանիշներին համապատասխան քաղաք, երբ զարթնում եմ` տեսնում մարդկային եւ ֆինանսական սուղ ռեսուրսները, նոր զգում եմ, թե այդ տարբերությունը որքան մեծ է: Կարեւորը, այդուհանդերձ, նպատակ ունենալն է: Համոզված եմ, որ մի օր կհասնենք մեր երազածին: Ցանկանում եմ օր առաջ տեսնել լավագույն քաղաք, որը ցավալիորեն դեռեւս չի ստացվում:

**– Գորիսը, ինչպես նշեցինք, միանգամայն նոր տեսքով համայնք է դառնում սեպտեմբերի 18-ից սկսած: Քաղաք, 11 գյուղ, ամեն մի բնակավայրն իր խնդիրներով, հոգսերով: Դուք լա՞վ եք ճանաչում նոր համայնքը, թե՞ նոր-նոր, նախընտրական այս շրջանում եք ծանոթանում նրա հիմնախնդիրներին, նկատի ունենք հատկապես գյուղական բնակավայրերը, նրանց պրոբլեմներն ու հոգսերը:**

– Ես եղել եմ Գորիսի նախկին շրջանի համայնքների միության նախագահ, էությամբ շփվող եմ եւ շատ լավ կապեր եմ ունեցել մյուս համայնքների ղեկավարների ու աշխատակազմերի հետ, եւ այդ շփումների շնորհիվ տեղյակ եմ հոգսերին, ձեռքբերումներին, հնարավորություններին: Բացի այդ, երկու տասնամյակից ավելի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններ եմ ղեկավարել` սոցիալական ծառայություն, կենսաթոշակային ոլորտ, գազամատակարարում, ջրամատակարարում, որի ընթացքում շփումներ են եղել գյուղական բնակավայրում, որոնց բնակիչներին մեծավ մասամբ ճանաչում եմ, եւ նրանք ինձ գիտեն: Ոչ միայն գյուղական խնդիրներին եմ ծանոթ, այլեւ առանձին բնակիչների խնդիրներին ու հնարավորություններին: Իմ աշխատանքային փորձը հնարավորություն է տալիս, որ ճիշտ կողմնորոշվեմ, չնայած ասեմ, որ պարտադիր չէ սոսկ համայնքի ղեկավարի իմացությունը, համայնքը ճիշտ կառավարելու դեպքում, մարդկային առկա ռեսուրսները ճիշտ ուղղորդելու դեպքում կարելի է լավ արդյունք ստանալ:

**– Եվ ըստ ձեզ` որո՞նք են նոր համայնքի հիմնախնդիրները...**

– Ինչպես հանրապետության բոլոր գյուղական համայնքներում, այնպես էլ Գորիսի գյուղական բնակավայրերում, որտեղ տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, լուրջ խնդիր է գյուղատնտեսության զարգացմանը նպաստ բերելը եւ, իհարկե, գյուղապահպանությունը: Նախ` գյուղմթերքների արտադրություն կազմակերպելը, դա կլինի ֆերմերային տնտեսություններ ստեղծելով, խոշորացնելով, թե առանձին անհատների տնտեսությունների կայացմանը եւ բարգավաճմանը նպաստելով, թե գյուղատնտեսական մթերքների իրացմամբ: Մասնավորապես, անասնապահական մթերքների իրացման նպատակով կարեւորում եմ Գորիսում սպանդանոց ունենալը, որի ստեղծման նախադրյալները եւ նախնական պայմանավորվածությունները կան: Եվ շատ կարեւորում եմ մեքենատրակտորային հավաքակայանի ձեւավորումը: Վստահ եմ` մեկ միասնական մեքենատրակտորային հավաքակայան կունենանք, որի շնորհիվ գյուղատնտեսական մթերքների արտադրության ինքնարժեքը կիջնի: Նաեւ կարեւորում եմ համայնքների միջեւ տրանսպորտային կապի ձեւավորումը: Այսօր կան գյուղեր, որոնք Գորիս քաղաքի հետ տրանսպորտային կապ չունեն: Երթուղիներ չկան: Մրցույթներ լինում են, բայց երթուղիների ոչ շահավետության պատճառով մրցույթի մասնակիցներ չեն լինում, ինչի հետեւանքով լուրջ խնդիրներ են ծագել ուղեւորափոխադրումների հետ կապված:

Կարեւորում եմ սպասարկող ծառայությունները գյուղական բնակավայրերին մոտեցնելը, որ համայնքի բնակիչը դրական տեղաշարժ տեսնի սպասարկման առումով:

Եվ ամենակարեւորը` համայնքապետարանի կառավարման ու սպասարկման ճիշտ մոդել ընտրելն է, որ բնակիչը ստիպված չլինի որեւէ փաստաթղթի համար հասնել Գորիս: Մենք այնպիսի պայմաններ պիտի ստեղծենք, որ համայնքի բնակիչներն այդ խնդիրները լուծեն տեղում:

Ես հիմնախնդիրների մասին ընդհանրական նշեցի, բայց յուրաքանչյուր գյուղական համայնք իր պրոբլեմն ունի, եւ դրա լուծման տեսլականը կա: Սկսենք Բարձրավանից, որտեղ, կարծում եմ, զբոսաշրջության զարգացման նպաստավոր պայմաններ կան: Մեզ շատ է հուզում այնպիսի բնապահպանական խնդիր, որպիսին Վարարակն գետի հունի հակասանիտարական վիճակն է, ինչը լուրջ ֆինանսական ներդրումներ պահանջող գործ է, սակայն անհնարին չէ:

> *Համոզված եմ` միջազգային կառույցների հետ համագործակցելով գործը գլուխ կբերենք: Կկարողանանք նաեւ իրականացնել մաքրման կայանի կառուցումը, այսօր Ակների, Վերիշենի, Քարահունջի եւ Գորիս քաղաքի համար միասնական կայան է անհրաժեշտ ունենալ: Իհարկե, դա շատ մեծ ծախս է պահանջում, բայց պիտի ունենանք, որ գետը փրկենք վերջնական աղտոտումից:*

Կարեւորագույն խնդիր է ամբողջ համայնքով մեկ աղբահանություն կազմակերպելը եւ կենտրոնացված մեկ աղբավայր ունենալը: Մի ծրագրի մեջ ենք ընդգրկված` «Մաքուր դաշինք. մատչելի ծառայություններ Գորիս եւ Սառնակունք բազմաբնակավայր համայնքներին», որ մեկնարկել է հուլիսի 1-ից, ինչի շնորհիվ Գորիսում ունենալու ենք մեկ կենտրոնական աղբավայր, նաեւ աղբահանության գործն է ավելի բարելավվելու` աղբի տեղափոխման եւ տեսակավորման հարցը լուծելով:

**– Պարոն Ադունց, այնուամենայնիվ, մտահոգիչ է Բարձրավան գյուղի ճակատագիրը: Երեւի Գորիս համայնքի մեջ մտնող գյուղական համայնքներից միակն է (բացի Աղբուլաղից եւ Վանանդից), որի լինելությանն այսօր արդեն վտանգ է սպառնում:**

– Համաձայն եմ, բազմաթիվ անգամ եղել եմ Բարձրավանում, հիացել բնությամբ, պատմական արժեքներով, հիանալի տեղանքով, բայց համայնքը, կարծես, օրավուր լքյալի կարգավիճակ է ստանում, եւ մտածում եմ տրանսպորտային երթուղու խնդիր լուծելով, ներդրումներ անելով աստիճանաբար ոտքի կանգնեցնել համայնքը:

**– Սովորաբար գործող քաղաքապետներն իրենց նորից ընտրվելը պատճառաբանում են նրանով, որ կիսատ գործեր են մնացել: Որո՞նք են ձեր կիսատ գործերը: «Հրապարակ» թերթի հարցմանն ի պատասխան ասել էիք. երկու տարի է` աշխատում եմ, այսքան շուտ չեմ կարող հրաժարվել:**

– Պիտի ասեմ, որ այդ համատեքստում հրաժարվել բառը ճիշտ չէր ընտրված: Յուրաքանչյուր մարդ միշտ էլ անելիք ունի, քանի դեռ կանք, թեկուզ անձնական ծրագրեր միշտ ունենում ենք, ծրագրերից հրաժարվել ոչ մեկին խորհուրդ չէի տա: Միշտ էլ շեշտել եմ միտքը, որ անելիքներ դեռ շատ ունեմ: Սա` «Հրապարակ» թերթի նյութի առումով: Ինչ վերաբերում է քաղաքապետի պոստում պաշտոնավարելուն, ասեմ, բազմաթիվ ոլորտներ եմ ղեկավարել, եւ ոչ մի տեղ էլ ղեկավարելն ինձ համար ինքնանպատակ չի եղել: Երբ նկատել եմ, որ արդեն ասելիք չունեմ, ինքս եմ զիջել իմ տեղը, իսկ երկու տարվա ընթացքում շատ ավելի ծրագրեր ենք նախաձեռնել, մշակել, քան իրականացրել ենք, ես դա նկատի ունեի: Ի վերջո ես դեռ երկու տարի ունեի ինձ տրված վստահության քվեով, որպեսզի այդ ծրագրերը հասցնեի ավարտին: Խոսքը դրան էր վերաբերում, հիմա ընտրվելու դեպքում հինգ տարի ժամանակ կունենամ, եւ այդ ժամկետն ավելի նպաստավոր կլինի, որ մեր թիմի նախանշած ծրագրերն իրականացնենք: Չմոռանանք, որ ունենք կառավարության մշակած եւ հաստատած ծրագիր, որն ինքնին հինգ տարվա համար է նախատեսված:

**– Եվ դուք քաղաքապետի թեկնածու եք առաջադրվել ինչպե՞ս:**

– Ոչ թե ինքնաառաջադրմամբ, այլ հանրապետական կուսակցության տարածքային կառույցի կողմից:

**– Տեղական բյուջե. որքա՞ն էր այն, երբ սկսեցիք պաշտոնավարել եւ ինչքա՞ն է հիմա: Ձեր նախընտրական ծրագրում (երկու տարի առաջ, երբ ընտրվում էիք) խոստացել էիք սեփական մուտքերի կատարումը հասցնել 100 տոկոսի, ինչի համար նպատակադրվել էիք ավելի արդյունավետ օգտագործել համայնքի հնարավորությունները, քաղաքի հիմնախնդիրները լուծելու համար հայթայթել ֆինանսավորման հավելյալ աղբյուրներ:**

– Ցավոք, Գորիս քաղաքի բյուջեում սեփական եկամուտները 16 տոկոս են կազմում, եւ եկամուտներն ավելացնելով ընդհանուր բյուջեի մեջ փոփոխությունն ակնառու չէ, ու նաեւ դրա արդյունքում ծախսային մասում ավելի շատ հատկացումներ չենք կարող անել: Բայց որդեգրել ենք ամենօրյա հաշվառում իրականացնելու, սեփական եկամուտներն ավելացնելու գործելակերպը, ինչն այսուհետեւ եւս շարունակելու ենք, իսկ ինչ վերաբերում է ծրագրեր իրականացնելուն, գիտե՞ք, կարելի է նույն գումարը շատ ավելի արդյունավետ ծախսել եւ շատ ավելի էական բան կատարել: Մենք փորձում ենք քիչ ծախսով մեծ արդյունք ստանալ, նաեւ թիրախային ուղղություններ ընտրել, օրինակ, մեծ արձագանք ստացավ փողոցների անվանումներով ցուցանակներ տեղադրելը: Ասենք, ասֆալտապատումից կարելի է անցնել շատ ավելի քիչ ծախսատար, բայց ավելի արդյունավետ գործերի: Բացի դրանից միջազգային կազմակերպությունների հետ ունենք լուրջ համագործակցության ծրագրեր, որոնք արդեն հաստատվել են: Ես առավել հույս եմ կապում նման ծրագրերի հետ, քանի դեռ սեփական բյուջետային հնարավորությունները մեծ չեն:

**– Եթե մի կլորիկ գումար տային, համայնքի ո՞ր հիմնական խնդիրը կլուծեիք, ո՞րն եք համարում առաջնահերթ:**

– Յուրաքանչյուր համայնքապետ պարտավոր է ունենալ մաքուր, բարետես, գեղեցիկ քաղաք, որ այդ համայնքում բնակվողը հաճույք ստանա իր շրջապատից: Խոսում են Գորիս քաղաքի անմխիթար վիճակում գտնվող մայթերից, բայց ինձ նախեւառաջ հուզում է համայնքի սանիտարական վիճակը: Յուրաքանչյուր միջոց, նախեւառաջ, կուղղեմ համայնքի բարեկարգմանը եւ սանմաքրման գործի բարելավմանը: Իսկ որպես շարքային քաղաքացի, կմտածեի այդ միջոցն օգտագործել որեւէ արտադրություն ստեղծելու նպատակով: Բնակչության զբաղվածության խնդիրը Գորիսում հարցերի հարցն է:

**– Որպես տեղական մասշտաբի քաղաքական գործիչ, կուզեինք ձեզ հարց ուղղել եւ իմանալ, թե ինչ դասեր կարելի է քաղել Արցախյան քառօրյա պատերազմից, եւ ինչպես եք գնահատում հուլիսյան դեպքերը ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի շուրջ:**

– Նախ` քառօրյա պատերազմին բոլորս ակտիվ մասնակցություն ունեցանք, դա ժողովրդի ինքնաբուխ պոռթկումն էր, որ նաեւ մարզպետի գլխավորությամբ փորձեցինք ուղղորդել ճիշտ նպատակին, որ խուճապ ու աննպատակ քայլեր չլինեն: Դա կարծես թե հաջողվեց: Ինքս փորձել եմ կոորդինացնել նյութամատակարարման ապահովման ոլորտը` զուտ կամավորական ջոկատներին ուղղված: Նաեւ բանակին է նյութական աջակցություն ցուցաբերվել: Քառօրյա պատերազմը բոլորիս համար զգաստության կոչ էր, եւ յուրաքանչյուրս մեզ պիտի հաշիվ տանք, որ մեր քայլերով նպաստ ենք բերում մեր անվտանգությանը, այսինքն` ամեն մեկս մեր զգոնությունը չպիտի կորցնենք եւ Աստծո ամեն օր մտածենք մեր պաշտպանունակության ամրապնդման մասին: Քանզի իրականությունը ցույց տվեց, որ որոշ ժամանակ մեզ ավելի ապահով էինք զգում, քան կարելի էր:

Ինչ վերաբերում է հուլիսյան դեպքերին, միշտ ձգտել եմ սեփական տեսակետս արտահայտել, կրավորական կեցվածք չեմ ընդունել թե՛ համայնքային կյանքին առնչվող խնդիրների դեպքում, թե՛ ընդհանրապես: 1997-ից ՀՀԿ անդամ եմ, բնականաբար, վերջին երկու տասնամյակում քաղաքականության մեջ եմ եղել, եւ կարծում եմ, որ յուրաքանչյուրն իր տեսակետն արտահայտելու իրավունք ունի, բայց նայած ինչ ձեւով: Նաեւ յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջելու, որ իր տեսակետը լսվի, ինչպես նաեւ ընդունվի: Արտահայտվողներն էլ դրանք ճիշտ ձեւով պետք է արտահայտեն, եւ նրանց լսողներն էլ ճիշտ ընկալեն: Միայն այդ պարագայում չէինք ունենա հուլիսյան իրադարձությունները:

**– Օլիմպիական խաղերն ավարտվեցին, Հայաստանը հաջող հանդես եկավ. 20 տարի անց ունեցանք օլիմպիական չեմպիոն: Կապանն էլ օլիմպիադայում ունեցավ իր պատվիրակը` եռացատկորդ Լեւոն Աղասյան, մարզական հաջողությունների հիմքը մանկապատանեկան սպորտն է, որ դրվում է համայնքներում: Ինչպիսի՞ն է մանկապատանեկան սպորտի դրվածքը Գորիսում:**

– Անկեղծորեն ասած` ինձ չի հաջողվել այդ գործում լուրջ առաջընթաց ապահովել, չնայած կայուն զարգացում կա, Գորիսի ֆուտբոլի մանկապատանեկան թիմը լավ մասնակցություն ունի, հանրապետության առաջնությունում ըմբիշները հաջող են հանդես գալիս, շախմատի թիմը կայուն արդյունքներ է ցույց տալիս: Սակայն կտրուկ աճ մանկապատանեկան սպորտի, ինչպես եւ համայնքի մարզական կյանքում չի նկատվում, լուրջ անելիքներ ունենք այդ ոլորտում: Դուք մանկապատանեկան սպորտի մասին եք հարցնում, բայց նշեմ, որ մասսայական սպորտը ձգտում ենք արմատավորել նախադպրոցական հիմնարկներում: Այսպես, հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի մարզային փուլում հաղթող ճանաչվեց Գորիսի N2 նախադպրոցական ուսումնական հաստատության թիմը, որ նաեւ հաջող հանդես եկավ մրցույթի հանրապետական փուլում` գրավելով երրորդ տեղը: Մեր նախորդ զրույցի ժամանակ («Սյունյաց երկիր», 18 սեպտեմբերի 2015թ., խմբ.) նշել էի, որ Գորիսը չմասնակցեց «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին, բայց ահա այս տարվա մրցույթին, գոնե վերջին տարիների պատմության մեջ առաջին անգամ, Գորիսը մասնակցեց հանրապետության նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին: Դա ինքնին դրական տեղաշարժ է, քանզի արդեն համայնքում հոգեբանություն է փոխվում, մտածելակերպ է փոխվում, որ ընտանիքով կարելի է մարզական մրցույթի մասնակցել:

**– Ձեր ուղերձը համայնքի բնակիչներին սեպտեմբերի 18-ի ընտրությունների առիթով:**

– Միշտ ասել եմ եւ նույնը կրկնում եմ` ընտրությունները գալիս-գնում են, համայնքն ապրում է, մենք միասին պիտի համերաշխ ապրենք ու գոյատեւենք: Ոչ մի ընտրություն մեր համերաշխությունը չպիտի խաթարի: Ուստի կոչ եմ անում լինել ակտիվ, համարձակ, սեփական տեսակետը դավանող, մեկը մյուսին հարգող եւ ընդհանրապես ոչ միայն ընտրությունների ընթացքում, այլ միշտ լինել համայնքի տերն ու ծառան, նրա ապագային նվիրված ճշմարիտ քաղաքացի: Նման մտածելակերպով շատ ավելի օրինակելի համայնք կունենանք:

**– Քաղաքական մի ավանդույթ կա մեզանում` հատկապես ընտրովի պաշտոնին հավակնող յուրաքանչյուր ոք` համայնքի ղեկավարից մինչեւ երկրի նախագահ, հանրությանը ներկայանում է ինչ-որ կարգախոսով: Ո՞րն է ձեր կարգախոսը ներկա ընտրություններում եւ առաջիկա հինգ տարում:**

– Շարունակում եմ առաջնորդվել գրեթե նույն կարգախոսով, որ որդեգրել եմ երկու տարի առաջ` «Գորիս համայնքին` նվիրումս, փորձս, գիտելիքներս»:

**Զրույցը` ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

Գործն է անմահ, լավ իմացեք...

# Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցի՝ պաշտոնավարման երկու տարվա ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվություն (հապված)

Հաշվետու ժամանակահատվածն ընդգրկում է 2014թ. հուլիսի 21-ից մինչեւ 2016թ. հուլիսի 21-ը: Ըստ ընթացիկ եւ քառամյա ծրագրերի՝ կազմակերպվել եւ վերահսկվել է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը, պատշաճ ձեւով լուծվել են վերջինիս առջեւ դրված գործառույթներից բխող խնդիրները, ընդունվել են որոշումներ, որոնց արդյունքում քաղաքում իրականացվել են մի շարք աշխատանքներ:

### Քաղաքացիների եւ փնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում

- Հրավիրվել է ավագանու 18 (12 հերթական, 6 արտահերթ) նիստ՝ սահմանված կարգով, որի ժամանակ ընդունվել է 165 որոշում:
- Համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում կայացրել է 613 որոշում, կազմել արձանագրություններ եւ արձակել 176 կարգադրություն:
- Անց է կացվել վերապատրաստման երկու դասընթաց, որին մասնակցել է համայնքային 12 ծառայող:
- Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքացիներից ստացվել է 1158 դիմում, պատրաստվել՝ 1241 գրություն: Դիմումներում բարձրացված հարցերն առնչվել են աշխատանքի տեղավորման, բնակարանային խնդիրների լուծման, սոցիալական հարցերի բարելավման, բնակարանի հասցեավորման, հողհատկացման, շինարարության եւ առեւտրի ու սպասարկումների թույլտվության, խնամակալության, իրավական, առողջապահական խնդիրների հետ եւ այլն:
- Կատարվել է քաղաքացիների ընդունելություն. 732 քաղաքացի իրեն հուզող խնդրով դիմել է համայնքապետին:
- Համայնքի ղեկավարին կից ձեւավորվել եւ գործում է երեք խորհրդակցական մարմին:

### Հողօգտագործման, քաղաքաշինության եւ կոմունալ տնտեսության ու բարեկարգման բնագավառում

- Շենք-շինությունների կառուցապատման ընթացակարգի համաձայն կառուցապատողներին տրվել է 39 ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ նախագծային աշխատանքներ կատարելու համար:
- Քաղաքացիներին եւ հիմնարկ-ձեռնարկություններին տրվել է մինչեւ 2001թ. մայիսի 15-ը կառուցված շինությունների օրինականացման եւ հիմքերի վերականգնման 70, շինարարության կասեցման 4, շինությունների գործառնական նշանակության փոփոխության 2, հասցեավորման 255 որոշում, շինարարության շահագործման փաստագրման 4 ակտ ու հողհատկացման հատակագիծ, 13 կառուցապատման իրավունք, իրականացվել է 4 աճուրդ եւ ուղղակի վաճառքով օտարվել 22 գույք:
- Պետական բյուջեով՝ 186.3մլն դրամով ասֆալտապատվել եւ բարեկարգվել է Մ2 ճանապարհի 4.5 կմ-ը՝ Քրիստափոր փողոցն ամբողջությամբ, Սյունիք փողոցի մի հատվածը:
- Սյունիքի մարզպետարանի կողմից հատկացված միջոցներով բարեկարգվել, ասֆալտապատվել եւ սելավաջրերի հոսքերից բարեկարգված հատվածները պաշտպանելու նպատակով շինարարական աշխատանքներ են տարվել Վ. Մամիկոնյան փողոցի 3420 քմ հատվածում:
- Իրականացվել են Վանքի տափ թաղամասի բակերի բարեկարգում եւ ասֆալտապատում՝ ընդհանուր 3438 քմ մակերեսով:
- Ասֆալտապատվել է Ավանգարդ թաղամասի 1800քմ մակերեսով ճանապարհը եւ վերանորոգվել 185քմ ընդհանուր մակերեսով մայթը:
- Բարեկարգվել են Ա.Բակունցի արձանի եւ Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանի շրջակա տարածքները, կանաչապատվել եւ ծաղկապատվել են ծաղկանոցները:
- Վերանորոգվել է Գորիս գյուղ տանող երկաթե կամուրջը եւ բարեկարգվել շրջակայքը:
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում 1,5 միլիոն ՀՀ դրամով վերանորոգվել է Վանքի տափ թաղամասի կամուրջը, լայնացվել եւ բետոնապատվել հարակից տարածքը:
- Կարապետյան եւ Գ. Նժդեհի փողոցներում կառուցվել են հեղեղատարներ:
- 2016թ. կնքվել է աղբահանության 203 պայմանագիր, որից 56-ը՝ պետհիմնարկների, 29-ը՝ ՍՊԸ-ների, 118-ը՝ անհատ ձեռներեցների հետ:
- «Սյունիք-Զանգեզուր» բարեգործական հիմնադրամով՝ Սուրիկ Խաչատրյանի հովանավորությամբ, վերանորոգվել է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տանիքը, հիմնանորոգվել է քաղաքի Գ. Տաթեւացու անվան հրապարակը, Հայրենական մեծ պատերազմի հուշահամալիրում կառուցվել է Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան, լրամշակվում է համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագիծը, հիմնանորոգվում է Գորիսի համայնքապետարանի շենքը:

### Կրթության եւ մշակույթի բնագավառում

- Գորիսի համայնքապետարանի ենթակայությամբ մշակույթի եւ կրթության բնագավառում գործում է 7 ՆՈՒՀ, 1 մշակույթի տուն, 2 երաժշտական, 1 արվեստի, 1 շախմատի դպրոց: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում եւ մասնագիտական դպրոցների երեխաների միջին հաճախումներն այսպիսին են՝ նախակրթարաններ՝ 789, երաժշտական դպրոցներ՝ 220, արվեստի դպրոց՝ 65, շախմատի դպրոց՝ 47, մանկապատանեկան մարզադպրոց՝ 195:
- Կրթության բնագավառում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ նվիրված Վերջին զանգին, Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան՝ հունիսի 1-ին, սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի եւ Ուսուցչի օրվան:
- Անց են կացվել արդեն ավանդույթ դարձած «Գորիսյան օրեր», «Թթի փառատոն» տոնակատարությունները եւ «Թանգարանային գիշեր» միջոցառումները:
- Նշվել են Ա. Բակունցի, Ս. Խանզադյանի, Գ. Աշոտի, Ս. Այվազյանի, Հ. Սահյանի ծննդյան օրերը, անց է կացվել «Հայրենիք եւ ճշմարտություն» խորագիրը կրող միջոցառում՝ նվիրված սպարապետ Գ. Նժդեհի 130-ամյակին:
- Երիտասարդների ամառային հանգիստն ակտիվացնելու համար յուրաքանչյուր ուրբաթ կազմակերպվել եւ կազմակերպվում են ազգային պարերի բաց պարապմունքներ եւ ուրախ դիսկոտեկներ:
- Կազմակերպվել է համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը՝ ապահովելով երեխաների ժամանակին եւ անվտանգ տեղափոխումը Հանքավան :

### Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում

- Համայնքային ենթակայությամբ գործող Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցում գործում է 6 մարզական խմբակ՝ բասկետբոլ, ֆուտբոլ, ազատ ոճի ըմբշամարտ, ծանրամարտ, վոլեյբոլ, թեթեւ ատլետիկա: Գործող 15 խմբում 9-16 տարեկան 195 երեխայի հետ աշխատում է 9 մարզիչ:
- Կազմակերպվել են մի շարք սպորտային միջոցառումներ:
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների միջեւ կազմակերպվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն նախադպրոցական հիմնարկ» մարզական միջոցառումը, որի շրջանակներում Գորիսի թիվ 2 ՆՈՒՀ-ի «Արեւ» թիմը հանրապետությունում զբաղեցրել է 3-րդ տեղը:
- Կազմակերպվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը:

### Տրանսպորտի բնագավառում

- Կազմակերպվել է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների եւ կազմակերպությունների գործունեությունը:

### Սոցիալական ապահովության բնագավառում

- Իրականացվել են համայնքի ազգաբնակչության սոցիալական ապահովության որոշակի աջակցություններ՝ խորհրդատվությունների եւ օգնությունների ձեւով:
- Դրամական օգնություն է տրվել սոցիալապես անապահով 374 ընտանիքի եւ դժվար իրավիճակում հայտնված 2 ընտանիքի՝ յուրաքանչյուրին 1.000.000 /մեկ միլիոն / ՀՀ դրամ:
- Աջակցություն է տրվել Գորիս համայնքի 2 սոցիալական տան կառավարման եւ պահպանման աշխատանքների համար /371 500 ՀՀդրամ/:
- Գորիսի սոցիալական տների բնակիչներին տրվել է էլեկտրաէներգիայի եւ գազի վարձավճարների փոխհատուցում:
- Ապահովվել է քաղաքապետարանի «Խնամակալության եւ հոգաբարձության» հանձնաժողովի գործունեությունը /հանձնաժողովի 34 նիստ, որտեղ քննարկվել է 38 գործ/:

### Գյուղատնտեսության բնագավառում

- 2016թ. մարտին ստեղծվել է «Գորիս համայնքի արոտօգտագործողների միավորում» Մ/Կ, որի նպատակն է տնտեսական եւ սոցիալական զարգացման ճանապարհով խթանել համայնքի ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացումը՝ «Համայնքի արոտավայրերի կառավարման եւ անասնապահության զարգացման» պլանի իրականացման միջոցով:
- Համաձայն ՀՀ գյուղնախարարության կառուցվածքում գործող «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն» ծրագրի իրականացման գրասենյակի («ԳԲԱ» ԾԻԳ), «Գորիս համայնքի արոտօգտագործողների միավորում» Մ/Կ եւ Գորիսի համայնքապետարանի միջեւ կնքված եռակողմ պայմանագրի, Համաշխարհային բանկի միջոցներով (5% համաներդրմամբ) համայնքի մերձակա սակավաջուր արոտավայրերում կտեղադրվի երեք անասնախմոց, որոնց նախագծանախահաշվային փաստաթղթերն արդեն պատրաստ են: Նույն պայմանագրի համաձայն կոոպերատիվին կտրամադրվի երկու միավոր գյուղտեխնիկա (20% համաներդրմամբ):
- Գորիս համայնքի հողօգտագործողներին 2016թ. գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով՝ պետական աջակցության ծրագրի շրջանակներում, բաշխվել են դիզվառելիք, աշնանացան ցորենի, գարնանացան գարու, առվույտի, կորնգանի սերմացուներ, ազոտական պարարտանյութ:

### Համայնքի արտաքին՝ միջազգային, միջհամայնքային կապերի եւ հկ-ների հետ համագործակցության զարգացմանն ուղղված գործունեությունը

- 2015թ հուլիսի 22-ին Գորիսը դարձել է «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության անդամ: «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հիմքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաժողովի՝ համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգության պահպանման հռչակագիրն է:
- Գորիսում մեկնարկել է Ասիական զարգացման բանկի, ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության, COWI A/S դանիական խորհրդատվական ընկերության համատեղ ուժերով եւ ճապոնիայի կառավարության աղքատության նվազեցման հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի հեռավոր եւ փոքր համայնքներում կոշտ թափոնների կառավարման լուծումներ» ծրագիրը:
- Կառավարությունը հունիսի 9-ի նիստում հավանության է արժանացրել Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ 2016թ. փետրվարի 23-ին ստորագրված համաձայնագիրը, որով նախատեսվում է վերակառուցել եւ արդիականացնել Գորիսի մանկական եւ երիտասարդական զբոսայգիները, իրականացնել Գորիսի պատմական կենտրոնի հուշարձաններ համարվող ժողովրդական տների եւ հասարակական շինությունների գլխավոր ճակատների, հարակից տարածքների եւ ենթակառուցվածքների վերակառուցման, Գորիս գյուղ տա-

էջ 8

# Գորիս համայնքի ղեկավարի թեկնածու Վաչագան Ադունցի նախընտրական ծրագիր

էջ 2

աղբավայրի ստեղծումը: Այս համատեքստում օրվա խնդիր է դառնում Վարարակն գետի հունի մաքրումը, Ակներ, Վերիշեն գյուղերի կոյուղու ցանցերի վերակառուցումը, դրանք Գորիս քաղաքի կոյուղու հետ միացնելը: Հաշվի առնելով այս աշխատանքների մեծ ծավալները՝ անհրաժեշտ է դրանում ընդգրկել ամբողջ հասարակությանը, մեր տարածաշրջանից դուրս ապրող ու գործող գորիսեցի գործարարներին: Բարեկարգել բոլոր բնակավայրերի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը:

Գորիս քաղաքի շրջակայքում կան տասնյակ հանգստի, ժամանցի գոտիներ: Այդ գոտիների զգալի մասը գտնվում է հակասանիտարական վիճակում: Անհրաժեշտ է դրանք նորմալ սանիտարական տեսքի բերել եւ միջոցներ մշակել դրանց վերահսկման նկատմամբ:

- Համակողմանի աջակցություն ցույց տալ զբոսաշրջության զարգացման նպատակով Հին Գորիսը վերականգնող անհատ ձեռներեցներին եւ կազմակերպություններին:
- Առանձնահատուկ վերաբերմունք պետք է ցուցաբերվի Գորիս քաղաքի նկատմամբ: Այսօր էլ մայթերի մաքրման, կանաչ գոտիների խնամքի, ծայրամասային թաղամասերի բարեկարգման հարցերն օրակարգային են:

Հարկավոր է վերականգնել «Լավագույն փողոց», «Լավագույն տուն, բակ» մրցույթները:

- Ժամանակակից կառավարման ենթարկել բնակչության կոմունալ-կենցաղային սպասարկման ոլորտները: Կարգավորել բազմաբնակարան շենքերի պահպանումն ու կառավարումը, որոնց վիճակը տարեցտարի վատանում է:
- Համայնքի տնտեսության մեջ իրական առաջընթացը զգալիորեն կախված է ծանրակշիռ ֆերմերային տնտեսություն ունենալուց:

Գյուղատնտեսությանը գործնական օգնություն ցույց տալու նպատակով հանրապետության կառավարության միջնորդությամբ ստեղծել մեքենատրակտորային կայան:

Գյուղական բնակավայրերում ստեղծել ֆերմերներից պտղի, բանջարեղենի գնման ժամանակավոր կետեր:

Հնարավորության սահմաններում գյուղական բնակավայրերում օգնել զարգացնելու մուրաբաների, չրերի պատրաստման եւ մրգերի պահածոյացման ավանդական ձեւերը:

Խորհրդային տարիներին կառուցված ոռոգման համակարգի մեծ մասը ֆիզիկապես մաշվել, շարքից դուրս է եկել: Պլանավորել եւ ներդնել ոռոգման ժամանակակից, քիչ ծախսատար, խնայողական համակարգեր:

Հանրապետության գյուղնախարարության հետ լուծել համայնքում անասունների սպանդանոցի, կաթի վերամշակության փոքր գործարանների կառուցման հարցը:

Հարց բարձրացնել գյուղնախարարության առջեւ ի վերջո լուծելու բրդի գնման հարցը, որի իսպառ բացակայությունը մեծապես խոչընդոտում է ճյուղի զարգացմանը, ամառային արոտների արդյունավետ օգտագործմանը:

- Նպաստել փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացմանը:
- Զարգացնել համագործակցությունը համայնքում գործող սպասարկող կազմակերպությունների, հանրապետական գերատեսչությունների տեղական կառույցների հետ:
- Նպաստել առողջապահության զարգացմանը: Առանց առողջ բնակչության հնարավոր չէ լուծել եւ ոչ մի հարց:

* * *

Ներկայացված ծրագիրը պարունակում է մեր ապագա աշխատանքի միայն հիմնական ուղղությունները եւ, բնականաբար, չի կարող կատարյալ լինել: Արդի բարդ, շատ դեպքերում նաեւ հակասական կյանքում հաճախ են ծնվում չպլանավորած, չնախատեսած նոր խնդիրներ, որոնց լուծումը նոր մոտեցումներ, նաեւ նոր միջոցներ են պահանջում: Նախընտրական քարոզարշավի, հանդիպումների ժամանակ անկասկած կլինեն շատ առաջարկներ, քննադատական դիտողություններ մեր աշխատանքում տեղ գտած թերությունների, հենց նաեւ ներկայացված այս ծրագրի վերաբերյալ, որոնք մենք կխմբավորենք եւ ավագանու, հասարակական շահագրգիռ կազմակերպությունների ու նրանց ներկայացուցիչների, մասնագետների հետ քննարկումներից հետո կներառենք համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մեջ:

Կոլեկտիվ աշխատանքը լինելու է մեր գործունեության հիմնական ձեւը:

**ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**
**Գորիս համայնքի ղեկավարի թեկնածու**

# Կուզեմ էս քաղաքի նախշը դառնաս՝ ասել է գորիսեցի Լուսիկ Գրիգորյանը, երբ Վաչագան Ադունցը փոքր երեխա էր

էջ 3

րաձայնած հարցերը լուծում կստանան, եւ բոլորս կհիանանք մեր յոթ աղբյուրով, խաղաղության զբոսայգին իր դեմքը կունենա:

Տարիքով փոքր է Վաչագան Ադունցը, բայց արդեն գլոբալ մտածողություն ունի: Հենց այդ մտածողությունը նրան հնարավորություն կտա ամուր նստել համայնքի ղեկավարի աթոռին եւ աթոռը ծառայեցնել ժողովրդին: Նա արժանի է համայնքապետի աթոռին:

## Մենք համագործակցության ձեռք ենք մեկնում՝ ասում է Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արփուշ Ղուկասյանը

Գորիսում երկար ժամանակ չէ, ինչ աշխատում եմ: Սակայն արդեն կարողացել եմ ծանոթանալ քաղաքին տարբեր տեսանկյուններից: Քաղաքի վրա քաղաքապետի ձեռք կա: Այս կարծիքն արտահայտեցին շատ գորիսեցիներ ինձ հետ զրուցելիս: Իսկ դա ժողովրդի ամենամեծ գնահատականն է:

Ես էլ լավ կարծիք ունեմ Վաչագան Ադունցի մասին: Նա նորմալ անձնավորություն է, հեշտ շփվող: Նա անպայման կդառնա խոշորացված համայնքի ղեկավար: Եթե ես էլ Գորիսում ապրեի եւ ընտրելու իրավունք ունենայի, առանց երկմտելու իմ ձայնը կտայի Վաչագան Ադունցին:

Ես ուզում եմ, որ Վաչագան Ադունցը համայնքի լավ ղեկավար լինի: Դրա համար էլ բարձրաձայնում եմ մի քանի խնդիրներ. զբոսայգիները պետք է վերակառուցվեն, ծառայեն իրենց նպատակին: Քաղաքի մշակութային կյանքը պիտի զարթոնք ապրի, բազմապիսի շատ միջոցառումներ պիտի կազմակերպվեն, որպեսզի բոլորը քաղաքում հետաքրքրություններ ունենան:

Գորիսի պետական համալսարանը ռազմավարական նշանակություն ունի Սյունիքի տարածաշրջանում: Այս բուհը հնարավորություն է տալիս սյունեցուն կապվել իր հող ու ջրին: Ուսման համար Երեւան մեկնած երիտասարդներից քչերն են վերադառնում ծննդավայր: Դրա համար էլ Գորիսի համալսարանը Սյունիքի գոյի երաշխավորն է: Համալսարանն էլ քաղաքի նման շատ խնդիրներ ունի, որոնք լուծում են պահանջում: Ահա ինչու ես համագործակցության ձեռք եմ մեկնում համայնքի ղեկավարին: Միացյալ ուժերով երկուստեք հուզող խնդիրները հեշտ է լուծել, միացյալ ուժերով զարկ կտանք համայնքի զարգացմանը: Եվ հաջորդ ընտրությանը Վաչագան Ադունցը խնդիր չի ունենա: Հիմա էլ չունի: Ուղղակի հիասքանչ է, երբ թեկնածուն ասպարեզ է դուրս գալիս ծանրակշիռ ասելիքով:

## Լուսիկ փափիկը հիմա էլ ասում է՝ խելքը գլխին մարդ է մեր քաղաքապետը, թող նա ինձնից էլ երկար ապրի

Լուսիկ տատիկը հիմա դժվար է լսում: Մեզ օգնության է հասնում նրա Սոնա անունով աղջիկը:

– Մամ, էլի ընտրություն է, Վաչագան Ադունցը համայնքապետի թեկնածու է առաջադրվել, ի՞նչ ունես ասելու:

– Խելքը գլխին մարդ է, թող էլի ընտրվի ու Գորիս անունը բարձր պահի:

**ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

Ð²Ø²ÚÜøÆ Ø°æ ØÎÜàÔ ¶ÜàôÖ°ðÀ



























Պատմում են լուսանկարները



05.05.2016թ., հանդիպում ՌԴ դեսպանատան ներկայացուցիչների հետ:



09.05.2016թ., ՀՀ վարչապետի, նախարարների, Սյունիքի մարզպետի հետ Վաչագան Ադունցը հարգում է Արցախյան հերոսամարտում զոհված հայորդիների հիշատակը:



16.03.2016թ., Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ԳՊՀ-ի ռեկտոր Արտուշ Ղուկասյանը եւ Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը հանդիպում են քաղաքի ուսումնական հաստատությունների տնօրենների հետ:



20.09.2015թ., Վաչագան Ադունցը Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի, քույր քաղաքներ Վիենի եւ Նեսվիժի քաղաքապետների հետ «Գորիսյան օրեր» միջոցառման ժամանակ:



20.08.2015թ., «Գորիսյան օրեր» տոնակատարությանը Գորիսի քաղաքապետը շնորհակալագիր է հանձնում վաստակաշատ բժշկուհի Ռոզա Մկրտչյանին:



23.03.2016թ., Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը հանդիպում է ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Պետր Միկիսկայի հետ:



04.07.2015թ., Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը շնորհակալագրեր է հանձնում «Սյունյաց բարիքներ» փառատոնի մասնակիցներին:



12.08.2016թ., Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը «Սյունյաց ավանդույթներ» փառատոնում:

Գործն է անմահ, լավ իմացե՛ք...

# Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցի՝ պաշտոնավարման երկու տարվա ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվություն (հապված)

էջ 6

նող հետիոտն ճանապարհի, տրանսպորտային կամուրջի կառուցման, Գորիս գյուղի քարանձավների մաքրման եւ արդիականացման աշխատանքները:

- Գորիսում իրականացվում է «Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ» CO-MUS ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է խթանել սոցիալական եւ տնտեսական զարգացումը՝ ուժեղացնելով մշակութային ժառանգության ռեսուրսները պատմական քաղաքներում:
- Գորիսի տոնին մասնակցելու համար Ֆրանսիայի Վիեն եւ Բելառուսի Նեսվիժ քույր քաղաքներից ժամանել են պատվիրակություններ:
- Ֆրանսիայի Վիեն քաղաքի հետ շարունակում են համագործակցել Գորիսի քաղաքային պատկերասրահը, ֆրանսախոսների, մշակութային եւ տուրիզմի զարգացման կենտրոնները, թիվ 1 եւ 5 ՆՈՒՀ-երը:
- 2015թ. եւ 2016թ. Գորիսի պատվիրակությունը՝ համայնքապետ Վաչագան Ադունցի գլխավորությամբ, պաշտոնական այցով մեկնել է Բելառուս՝ մասնակցելու Բելառուսի հանրապետության տոնին եւ Գորիսի քույր քաղաք Նեսվիժի օրվա միջոցառումներին:
- 2014, 2015, 2016թթ. Գորիս են ժամանել «GREF» «Թոշակառու ուսուցիչներ առանց սահմանի» կազմակերպության կամավորները:
- Համայնքի ղեկավարը Գորիսի հկ-ների հետ մասնակցել է քաղաքացիական հասարակության օրվան նվիրված հանդիպմանը:
- Պաշտոնական այցով Գորիս են ժամանել ՀՀ նախագահը, վարչապետը եւ գրեթե բոլոր նախարարները:

**Գորիս համայնքի 2014, 2015, 2016թթ. բյուջեի կատարման մասին**

**Եկամուտների վերլուծություն**

- Գորիս համայնքի 2014թ. բյուջեն եկամուտների գծով կատարվել է 105,85 %-ով, բյուջեով նախատեսված 438 380 800 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 464 010 533 դրամ:
- Գորիս համայնքի 2015թ. բյուջեն եկամուտների գծով կատարվել է 103,04 %-ով, բյուջեով նախատեսված 485 474 900 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 500 241 626 դրամ:
- Գորիս համայնքի 2016թ. բյուջեի եկամտային մասը նախատեսվել է 483 085 400 դրամ: 1-ին կիսամյակում բյուջեի եկամուտները կատարվել են 106,8 %-ով՝ փաստացի մուտքերը կազմելով 258 045 654 դրամ:

**Ծախսերի վերլուծություն**

- Գորիս համայնքի 2014թ. բյուջեն ծախսերի գծով կատարվել է 93,09 %-ով, նախատեսված 440 212 600 դրամի դիմաց ծախսերը կազմել են 409 803 383 դրամ:
- Գորիս համայնքի 2015թ. բյուջեն ծախսերի գծով կատարվել է 93,3 %-ով, նախատեսված 485 474 900 դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 452 986 412 դրամ:
- Գորիս համայնքի 2016թ. բյուջեի ծախսային մասը նախատեսվել է 491 537 400 դրամ: 1-ին կիսամյակում բյուջեի ծախսերը կատարվել են 88,8%-ով՝ փաստացի ծախսերը կազմելով 218 365 365 դրամ:

Սյունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 06.09.2016թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: